

Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (20-րդ տարի)

Այս թիւով.....

Մարտ ամսուան բացատրական տօնացոյց Էջ 2-11

Քառասուն Մանկունք
Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Խոր
Վիրապ մուտքը
Մեծ Պահքի 7 Կիրակիները
Ա. Բուն Բարեկենդան
Բ. Արտաքսման
Գ. Անառակին
Դ. Տնտեսին
Միջինք
Ե. Դատաւորին
Ս. Յովհաննէս Երուսաղէմացի
Ս. Յովհաննէս Օձնեցի
Ս. Յովհաննէս Որոտնեցի
Ս. Գրիգոր Տաթեւացի
Տաթեւի Վանք, Ճոպանուղի

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Մեծ Պահքը Երբեակ Իմաստով Էջ 16

Մարտ 2020 (ԻԷ տարի թիւ 7)



Պ... Պահք

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Երբ ծով կը պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծով կը պահեն: Վստահ եղէք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ծով կը պահես, օձէ՛ գլուխդ եւ լուա՛ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծով կը պահես, այլ՝ միայն Հայրը, որ անտեսանելի է եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս»:

Մատթէոս 6.16-18

Մարտ ամսուան բացատրական տօնացոյց

Կիր.1	Մեծ Պահքի Բ. Կիրակի՝ Արտաքսման
Կիր.8	Մեծ Պահքի Գ. Կիրակի՝ Անառակին
Շբթ. 14	Ս. Յովհաննէս Երուսաղէմցի, Ս. Յովհաննէս Օձնեցի, Ս. Յովհաննէս Որոտնեցի, Ս. Գրիգոր Տաթևացի
Կիր. 15	Մեծ Պահքի Դ. Կիրակի՝ ՏՆՏԵՍԻՆ
Դշ. 18	ՄԻՋԻՆՔ
Շբթ. 21	Սուրբ Քառասուն Մանկունք
Կիր. 22	Մեծ Պահքի Ե. Կիրակի՝ ԴԱՏԱԻՈՐԻՆ
Շբթ. 28	Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մուտն ի Վիրապ
Կիր. 29	Մեծ Պահքի Զ. Կիրակի՝ ԳԱԼՍՏԵԱՆ

Պահք՝ 1,2,3, 4,5,6,7,8,9,10,11,12,13,14,15,16,17,18,19,20,21,22,23,24,25,26,27,28,29,30,31

Սեբաստիոյ մէջ նահատակուած 40 զինուորներ (քառասուն մանկունք)



Սկսկի Ասեղնագործ

4-րդ դարու սկիզբը նահատակուած քրիստոսի 40 վկաները Վիտորի Բայթի փարբեր խաղաֆներէն էին եւ Սեբաստիոյ կայսերական գունդին լինուորական ծառայութեան մէջ էին: Երբ Լիկիանոս կայսեր Կրամանով կ'ետարիայի դուշա լիւսիսար Բարպաֆննութիւն կը կազմակերպէ՝ բանակին մէջի խրիստոնէայ լինուորներ յայտնաբերելու նպատակով, անոնցմէ 40-ը, Բաւարարիմ իրենց Բաւարֆին, անվեհեր պատասխաններով դաբաւորներուն վայրոյթ կը պատճառեն եւ կը բանտարկուին: Ձմեռնային ցուրտ գիշեր մը պիտենֆ կը ներտեն Սեբաստիոյ մօտակայ լիճը: 40-էն միայն մէկը չի կրնար փրկուանֆներուն դիմանալ: Դուրս ելլելով սառած զուրէն, ան կը փորձէ փրկութիւն գտնել լճաֆին կառուցուած փան մէջ, սակայն այդպէս կնֆելով մահկանացուն, կը վրկուի թէ երկրային և թե երկնային կեանֆէն: Լուսաղէմին միւս բոլոր նահատակները կ'երեւին լոյսէ պսակներով վարդարուած:

Պահապան լինուորներէն մէկը, փեսնելով այդ կը լեցուի քրիստոսի Բաւարֆով և ներտելով լիճը, պսակակից կը դառնայ անոնց: Աստուածային Բրաշֆով ճմեռնային սառնամանիֆը դիմակալած վկաները առաւօրեան կը նահատակուին: Անոնց նշխարները կ'ամֆիոֆուին Սեբաստիոյ մէջ, ուր Բերպագային կը կառուցուի «Քառասուն մանկունֆ» 40 գմբեթանի փաճարը, որ կանգուն մնացած է մինչեւ Լենկթիմուրի արշաւանֆը:

40 մանկանց (լինուորներու) պատմութիւնը կը յորդորէ կեանֆի բոլոր դժուարութիւններուն մէջ Բաւարարիմ մնալ քրիստոսի Բաւարֆին, յաղթահարել դիւրահաճ գայթակղութիւնները՝ երկնային պսակին արժանանալու Բամար: Այս փարի անոնց յիշափակը կը փօնենֆ Մարտ 10-ին:

Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը Վիտորուար 23-ին Կիրակնօրեայ Դպրոցը փօնեց Արբոց Վարդանանց եւ Բուն բարեկենդան Երբ նախակրթարանի աշակերփները ծափուեցան Բայկական փարաւներով: Այս փարուան Մեծ Պահֆի մեր առազարկած աշակերփական ծոմապահութիւնը Բերեւեալն է: Վիտորուար 24-29 **Chips**, Մարտ 1-7 Մուրմ (Շոֆոլայ), Մարտ 8-14 Բերոպեսիլ, Բանակարգիչ, պատարոով այլ խաղեր, Մարտ 15-21 Կապային խմիչֆներ, Մարտ 22-28 Շաֆար, Մարտ 29- Ապրիլ 4 Ծամոն, Ապրիլ 5-11 Բակիթ:

Այս փարուան պահֆի ընթացֆին սորվելիֆները Բերեւեալներն են.

ՄԱՆՆԱԿՄԱՐՄՆԶ եւ ՆԱԽԱԿՄԱՐՄԱՆ Ա. Բ. սորվիլ խաչակնֆել, Մէրունական Աղօթֆը եւ «Բաւարով խոսփովանիմ»էն 3 Բամարներ: ՆԱԽԱԿՄԱՐՄԱՆ Գ. Դ. Ե. եւ Զ. Գոց սորվիլ «Բաւարով խոսփովանիմ»ի առազին 12 Բամարները: ԵՄԿՄՄՄԱԿԱՆ Գոց սորվիլ Ա. Կորնթացիս 13-րդ գլուփսը, Նոր Կփակարանի Գիրֆերու շարֆը, եւ «Բաւարով խոսփովանիմ»ը:

Այս Մեծ Պահքի ընթացֆին յիշենք նաեւ կարօտեալները եւ մեր ունեցածէն անոնց ալ բաժին հանենք:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչի Խոր Վիրապ մուտքը



Սուրբ Գրիգոր Հայաստանեայց Եկեղեցւոյ առաջին պաշտօնական հայրապետը կը նկատուի որ Ոսկեդարու գրողներէն Ագաթանգեղոսի կողմէ նկարագրուած է իբր Քրիստոնէութիւնը հայ ժողովուրդին մօտ հաստատող եւ տարածող հիմնական դէմք: Անոր կրօնական աշխատանքը այնքան ազդեցիկ եւ որոշիչ եղած է որ ան նկատուած է հայ ժողովուրդի «Հայր եւ Լուսավորիչ»:

Հայաստանեայց եկեղեցին տարին քանի մը անգամ կը յիշատակէ Սուրբ Գրիգորի անունը, հիմնուելով անոր կեանքի յատկանշական հանգրուաններուն վրայ: Այսպէս Խոր Վիրապ մտնելը, Խոր Վիրապէն ելլելը եւ «Գիւտ նշխարացը»:

Վարի շարականի հեղինակը Յովհաննէս Երզնկացին է (Պլուզ) (1220/30-1293թթ.): Այս շարականը կ'երգուի Ս. Գրիգոր Լուսավորիչին նուիրուած երեք տօներէն առաջինին՝ “Մուտն ի վիրապ”-ի ժամանակ: Այդ օրը Գալստեան Կիրակիին նախորդող Շարաթ օրն է:

Կանոն՝ Սրբոյն Գրիգոր Լուսավորչին Մտնելոյն ի Վիրապն

Այսօր զուարճացեալ ցնծայ եկեղեցի. դրախտ աստուածատունկ ծաղկեալ. յորմէ տուաւ մեզ տունկն անմահութեան տէր Գրիգորիոս. եւ պտղովս իւրով ելից գտիեզերս ամենայն:

Բարունակ ողկուզաբեր ճշմարիտ որթոյն. մշակեալ հայրական աստուածային աջոյն. յորմէ բոխեաց բաժակն ուրախարար տրտմեցելոյ ազինս. որով արբեալ զմայլեցաք յուրախութիւն հոգեւոր:

Գարնանաբեր հնչումս հարաւային հողմոյն. ճառագայթեալ հրով աստուածային Հոգւոյն. որով հալեցաւ սառն կռապաշտութեան հիւսիսարնակ ազանց. եւ եղեն ծաղկեալք աստուածային գիտութեամբն:



Սուրբ Գրիգոր Լուսավորիչի Աջը

Փակեալ խորան

Մեծ պահքի շրջանին, եկեղեցիներէն ներս խորանները փակ կը մնան: Միակ բացառութիւնն է Ս. Գրիգոր Լուսավորչի «Մուտն ի Վիրապ» տօնի առիթով (այս տարի Ապրիլ 6-ին) մատուցուած պատարագը որ կը կատարուի բաց խորանով:

Մեծ Պահֆը ունի 7 Կիրակիներ, որոնք յարուկ եւ իմաստալից անուններ ունին.

Ա. Բուն Բարեկենդան

Մեծ Պահֆին նախորդող Կիրակին է. բարեկենդան կը նշանակէ բարի կեանք՝ աշխարհիկ իմաստով ուրախութիւն, խրախճանք, իսկ կրօնական իմաստով՝ երանելի կեանք, ինչպէս Ադամը կ'ապրէր դրախտին մէջ արտաքսուելէն առաջ:

Բ. Արտաքսման

Ադամն ու Եւան իրենց անհնազանդութեան պատճառաւ երկար չճացին դրախտին մէջ եւ արտաքսուեցան հոնկէ: Մեզի՝ մեղաւորներուս համար Քրիստոս ապաշխարութեամբ ցոյց տուաւ փրկութեան ճամբան, եւ դրախտին արժանանալու յոյսը:

Գ. Անառակին

Այս Կիրակին կը կրէ տուեալ օրուան ճաշու աւետարանի հատուածին անունը: Մեծ Պահֆի ընթացքին մեր ուղեւորութիւնը կը նմանի Անառակ Որդիին ապաշխարութեան յաջորդող դէպի իր հօր տունը վերադարձին: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 15.11-32 ին մէջ:

Դ. Տնտեսին

Անառակի Կիրակին կը յաջորդէ Տնտեսի Կիրակին որ իր անունը կը ստանայ դարձեալ Յիսուսի խօսած առակներէն մէկէն: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 16.1-13 ին մէջ: Միջինքը տեղի կ'ունենայ այս Կիրակին յաջորդող Չորեքշաբթին:

Ե. Դատաւորին

Դարձեալ Յիսուսի առակներէն մէկէն կը ստանայ իր անունը, որ դատաւորի մը եւ յարատեւող այրիի մը առակն է, զոր կրնանք կարդալ Ղուկաս 18.1-8 ի մէջ:

Զ. Գալստեան Այս կիրակի օրուան առակը Քրիստոսի աշխարհ գալուն խորհուրդը կը բացատրէ: Այդ օրուան աւետարանական ընթերցումին վերջին համարը՝ Մատթէոս 23.39 Քրիստոսի Գալստեան կ'ակնարկէ:

Է. Ծաղկազարդ Այսպէս կը կոչուի Քրիստոսի փառաւոր մուտքը Երուսաղէմ, իր խաչելութիւնն ու յարութիւնը կանխող Մէկշաբթի օրը: Այդ օր մանուկները եկեղեցի կ'երթան զարդարուած մուտքով ու կը մասնակցին թափօրին:

Ն. Կիրակի Բուն Բարեկենդան

ԵՊԵՄ

Նստուած սրեղծեց երկինքն ու երկիրը,
ան սրեղծեց ծառերն ու ձաղկկները եւ աշխարհի
բոլոր կենդանիները, ան սրեղծեց նաեւ Նոյան
ու Եւան որոնք ուրախ կ'ապրէին դրախտի մէջ:



Ր. Կիրակի Նորախան

ՆՊՆՄԻ ԵՒ ԵՐԱՅԻ ՆՊՄԱՔՄՈՒՄԸ

Նոյան եւ Եւա դրախտին մէջ ուրախ կ'ապրէին,
Նստուած իրենց ամէն բան արօժնած էր ուրել, բացի
իմաստութեան ծառի պտուղէն: Չար սատանան օճի
կերպարանքով մօտեցաւ ու խաբեց Եւային ու Նոյամին
եւ անոնք կերան արգիլուած ծառի պտուղէն: Նստուած
երբ իմացաւ շար բարկացաւ եւ Նոյամին ու Եւային
արտախսեց (դուրս դրաւ) դրախտէն:



Գ. Կիրակի Ննառակին

ԿՊՄՈՒԽԾ ՈՋԽԱՐՐ

Քրովի մը 100 ոչխարներ ունէր, անոնցմէ մէկը
կորսուեցաւ:

Քրովիը ձգեց իր 99 ոչխարները արօտավայրին
մէջ եւ գնաց փնտրելու կորսուած ոչխարը եւ երբ
գտաւ ուրախութեամբ իր ուսերուն վրայ դրաւ ոչխարը
եւ վերադարձաւ միւսներուն մօտ:



Գ. Կիրակի Անառակին

Կորստութեան դրամը

Կին մը փասը արձաթ դահեկան ունէր: Անոնցմէ մէկը կորսնցուց, լոյսը վառեց եւ փունը ուշադրութեամբ ավեց, մինչեւ որ դահեկանը գտնէ:

Երբ գտաւ կորսուած դրամը կանչեց իր բարեկամուհիները ու դրացիները եւ ուրախացաւ անոնց հետ:



Անառակ զոյգին

Մարդ մը երկու վաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Քայր, խու սրացուած լէյր ինձի ինկած բաժինը հիմա՛ փուր ինձի»: Եւ հայրը իր վաւակներուն միզել բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետէ, կրտսեր վաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Բոն անառակ կեանք մը ապրելով՝ վարնեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը փրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի խաղաղացիներէն մէկուն խոյձ ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը դրկեց Վինք՝ խոյձ արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոյձերուն կերած անելցուիքն իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու փար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ուզեց վերադառնալ իր հօրը խոյձ:



Մակաւին փունէն բաւական հեռու էր, երբ հայրը փեսաւ Վինք ու գրաց, վազելով դիմաւորեց Վայն, Վիվին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Քայր, մեղանչեցի Աստուծոյ եւ խեղի դէմ. այլեւս արժանի չեմ խու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «անմիզապէս բերէ՛ք լաւագոյն պատմութեանը եւ հագցուցէ՛ք իրեն. Մարանի անցուցէ՛ք իր մարին եւ կօշիկ փուցէ՛ք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէ՛ք, ուրենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս վաւակս մեռած էր՝ ողզնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախեանքի:

Դ. Կիրակի՝ Մնտեսին Եւրոպայի տնտեսը

Մեծահարուստ մարդ մը կար, որ իր սրապուրծներուն վրայ փնտես մը ունէր: Երբ փնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին՝ ըսելով թէ իր փորոզ հարստութիւնը կը վարեն, մեծահարուստը կանչեց Վինչ եւ ըսաւ. «Ինչ են խու մասիդ այս ըսուածները: Բեւի յանձնուած բոլոր սրապուրծներուն հաշիւը փութ: Այլեւս իմ փնտեսս չեն կրնար ըլլալ»:

Մնտեսը ինչնիրեն խորհեցաւ. «Ինչ կրնամ ընել. Ահա փէրս Վիս փնտեսութեան պաշտօնէն կը վրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Ասկայն գիտեմ թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ փէրս Վիս փնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ ընդունին Վիս իրենց փուներէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր փորոզ պարտապանները եւ առագինին հարցուց. «Որքան պարտք ունիս փորոզս»:

Անիկա պարտախանեց. «Երկու հարիւր թիթը չէթ»: Մնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ անմիզապէս գրէ՝ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դուն որքան պարտք ունիս»: Անիկա պարտախանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Մնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ գրէ՝ երեք հարիւր յիսուն»: Մէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ փնտեսը իր հնարամտութեան համար:

Պրովիէտել այս աշխարհի մարդիկը իրարու հանդէպ իրենց վարմունքին մէջ աւելի եւարակ են խան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ չեպի.- Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, չեպ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

Միզինք

Սուրբ 40 մանկանց փոսին նախորդող Չորեքշաբթի օրը Միզինք է, որովիէտել կը հանդիպի Մեծ Պահիի կէսին: Այս օրը երկարատեւ պահիի շրջանին կէսը նուաճած ըլլալու աւելումն է ու խնդրութեան առիթ կը նկատուի: Սեղանները կը սարճուին պահիի յարուկ ուրելիքներով:

Ինչ աւանդութիւն էր որ Միզինքի օրը փուներէն ներս պարտաստուէր բաղարզ կոչուած հաց մը որուն մէջ կը պահուէր մանր երկաթեայ դրամ մը: Երբ փնտի կ'ունենար ընտանեկան հաւաքոյթ, հացը մաս առ մաս կը բաժնուէր եւ բոլորին ուշադրութիւնը կը կեդրոնանար գրնելու համար փարուան այն բախտաւոր անձը որուն հացի բաժնին մէջէն պիտի ելլէր երկաթեայ դրամը:



Դ. Կիրակի Մոնպետին

ՆՊՔԱՄ ՂԱՋԱՐՈՍ

Մեծաճարուստ մարդ մը կար, որ բեհեզ եւ ծիրանի հագուստներ կը հագնէր եւ ամէն օր փառաւոր խնեոյժ կ'ընէր: Ղազարոս անունով աղճար մըն ալ կար, անոր դրան առգել կը նստէր եւ կը յուսար իր փորը լեցնել մեծաճարուստին սեղանի ատելքովներով: Ղազարոս վերջերով ծածկուած էր, եւ շուներ կու գային իր վերջերը կը լվէին: Աղճարը մեռաւ եւ հրեշտակները վինժ փարին Աբրահամի մօտ: Մեծաճարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Մինչ մեծաճարուստը



Դժոխքին մէջ կը փանզուէր, աչքերը բարձրացուց եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր խով: Մեծաճարուստը աղաղակեց. «հայր Աբրահամ, ողորմէ՛ ինձի եւ ղրկէ Ղազարոսը, որ մարին ծայրը զուրին թաթսէ եւ Վովացնէ լեզուս, որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը փառապիս»: Աբրահամ ըսաւ անոր. «Պրդեակ, յիշէ՛ թէ ինչպէս դուն խու կեանքիդ ընթացքին ամէն օր բարիժ վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Բի՛ւն անիկա հոս կը հանգստանայ, մինչ դուն հոն կը փառապիս: Չիտցիր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ճեր միգել: Եթէ ուզեն այստեղէն ճեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ»: Մեծաճարուստը ըսաւ. «Կ'աղաչեմ, հայր, Ղազարոսը ղրկէ իմ հօրս փունը, ուր հինգ եղբայրներ ունիմ, թող վանոնժ նախազգուշացնէ՝ որպէսպի անոնժ ալ փանզանժի այս վայրը չգան»: Աբրահամ ըսաւ անոր. «Անոնժ Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պարուիրանները լսեն եւ գործադրեն»: Մեծաճարուստը ըսաւ. «Արիկա բաւական չէ, հայր Աբրահամ. բայց եթէ մեռելներէն մէկը յարուրին առնէ եւ երթայ իրենց՝ պիտի ապաշխարեն»: Աբրահամ պարասխնեց. «Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մարիկ չեն ըներ, մեռելներէն յարուրին առնող մըն ալ պիտի չկարենայ համուել վիրենժ»:

Ե. Կիրակի Պատարհին

ԱՅՄՐ ԿԻՆՐ ԵՒ ՊԱՄԱԻՐՈՐ

Քաղաքի մը մէջ դատարար մը կար, որ ո՛չ Աստուծո՛ւ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'անշնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ՛ Բակառակորդէս»:

Պատարարը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծո՛ւ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ անշնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսպի մինչեւ վերջ խոյս գալով վիս չանհանգստացնէ»:



ՎԱՐԻՍԵՅԻՆ ԵՒ ՄԱՔՍԱԻՐՈՐ

Երկու հոգի տաճար գացին աղօթելու. մէկը՝ Վարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Վարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՛ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

- Կ'ըսեմ քեզի,- ելրակացուց Յիսուս,- մաքսաւորն է որ արդարացած փուն գնաց, եւ ոչ թէ Վարիսեցին, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:



Յովհաննէս Երուսաղէմացի (Պլուզ)

Հայաստանեայց եկեղեցին Մեծ Պահքի 4-րդ Կիրակին, Տնտեսի Կիրակին, նախորդող շաբաթ օրը կը յիշատակէ Յովհաննէս Երուսաղէմացիի եւ երեք կրօնա-ազգային դէմքերու տօնը: Ահա կը ներկայացնենք անոնցմէ իւրաքանչիւրին մասին հակիրճ կենսագրական մը:

Ս. Յովհաննէս Օձնեցի

Հայոց կաթողիկոս 717-728 թուականներուն եւ ծանօթ շարականագիր: Իր հեռատես եւ իւելացի կարողութիւններով, յաջողած է արաբական խալիֆայութեան տիրապետութեան ժամանակ ամրապնդել հայ եկեղեցւոյ դիրքը եւ զերծ պահել զայն զանազան տուրքերէ եւ հարկերէ: 718-ին կազմակերպած է եպիսկոպոսական ժողով, Դուինի մէջ, ուր մշակուած են եկեղեցական 37 օրէնքներ: Ան նշանաւոր է նաեւ աղանդներու դէմ իր մղած պայքարով:

Հոչակաւոր է իր փիլիսոփայական գիտելիքներով, որոնց շնորհիւ փորձած է ամրապնդել հայ եկեղեցին:

Ս. Յովհաննէս Որոտնեցի

Ծնած է Սիւնեաց Ծղուկ գաւառի Վաղադն գիւղին մէջ, 1315-ին: Աշակերտած է Գլաձորի համալսարանին մէջ Տիրատուր վարդապետին, որու մահէն ետք փոխադրուած է Որոտանի վանքը, հոն ստանալով Որոտնեցի մականունը: Ան ծանօթ է իբր մեծ աստուածաբան, իմաստասէր, մատենագիր եւ ուսուցչապետ: Հիմնած է Տաթևի համալսարանը եւ Ապրակունիսի բարձրորակ վանական դպրոցը, որոնք դարձած են աստուածաբանական եւ փիլիսոփայական կարեւորագոյն կեդրոններ: Պայքար մղած է հայաստանեայց եկեղեցւոյ լատինացման շարժումին դէմ:

Ան իր ժառանգ թողած աշխատութիւններուն մէջ արծարծած է հայ եկեղեցւոյ արարչութեան, եկեղեցաբանութեան, հրեշտակաբանութեան խնդիրներ եւ մանաւանդ մարդկային հոգիի մասին խորհրդածութիւններ:

Ս. Գրիգոր Տաթևացի

Յովհաննէս Որոտնեցիի նշանաւոր աշակերտներէն, աստուածաբան, փիլիսոփայ եւ մանկավարժ: Իր ժամանակակիցներուն կողմէ անուանուած է «Եռամեծ վարդապետ», «վարժապետ հայոցն»: Իր կարեւորագոյն գործերէն է «Գիրք հարցմանց»-ը որ աստուածաբանութեան գործնական գիրք մըն է: Ունի նաեւ քարոզչութիւն հաւաքածոյ հատոր մը:

Սուրբ Գրիգոր Տաթևացի ծնած է 1346-ին Վայոց Ձոր: Ան Յովհաննէս Որոտնեցիի հոչակաւոր աշակերտներէն մէկը ըլլալով՝ անոր պէս վարպետ էր լատիններէն լեզուի եւ յունական իմաստասիրութեան մէջ:

Թէեւ Գրիգոր Տաթևացի իր կեանքի մեծ բաժինը անցուցած է Տաթևի վանքէն ներս, ան այցելած է նաեւ բազմաթիւ այլ վանքեր որոնցմէ իւրաքանչիւրին մէջ արժանացած է իր աշակերտներուն յարգանքին, համարումին եւ հիացումին: Իր հանճարին շնորհիւ յաջողած է իր այցելած իւրաքանչիւր վանքէ ներս բազմացնել աշակերտներու ու հետեւորդներու թիւը:

Հաւատքի մեծ պաշտպան, մտաւորական ու հոգեւոր առաջնորդ Գրիգոր Տաթևացի հայ ժողովուրդին կողմէ կոչուած է յաճախ «երկրորդ Գրիգոր Լուսաւորիչ»:

Տաթևի Վանք



Հայաստանի հանրապետության հարավային ծայրը կը գտնուի Մինիքի մարզը որմէ ներս կառուցուած է մարզի պատմաճարտարապետական ամենէն նշանաւոր շինութիւնը՝ Տաթևի վանքը:

Կըսուի թէ ՏԱԹԵՒ բառը «Տա Թեւ» է «Թող Աստուած թեւ տա ձեզի» իմաստով, որ այդ օրերու հաւատացեալ ժողովուրդին աղօթքն էր շինողներուն, որոնք այդ դժուարին օրերուն եւ դժուարին տեղ վանք կ'ուզէին կառուցել:

Տաթևի վանքը հիմնուած է 9-րդ դարուն եւ անոր ամենէն հին շինութիւնը եղած է 895 թուականին կառուցուած Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցին: Եկեղեցոյ պատերը ծածկուած եղած

են հարուստ որճասնկարներով որոնցմէ այժմ քիչ բան պահպանուած է: Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցին դէպի հարաւ կառուցուած է Սուրբ Գրիգոր Եկեղեցին 1295-ին որուն ենթադրեալ ճարտարապետն է Մոմիկը:

Կը պատմուի թէ Տաթևի վանք այցելողները իրենց ուշադրութիւնը կը դարձնեն վանքի բակէն ներս, 10-րդ դարու սկիզբէն մեզի հասած հետաքրքրական յուշարձանի մը վրայ որ կը կոչուի «ճօճուող յուշասիւն» կամ «գաւազան»: Այս յուշասիւնը վանքի միակ կառոյցն է որ իր 8 մեթր հասակով հանդերձ անխաթար մնացած է շրջանի բազմաթիւ երկրաշարժներէն:

14-րդ եւ 15-րդ դարերուն, Տաթևի վանքը հայկական մշակոյթի եւ լուսաւորութեան ճանչցուած կեդրոններէն մէկը եղած է ուր գործած են Տաթևի համալսարանը, մատենադարանը եւ մանրանկարչութեան դպրոցը: Տաթևի համալսարանէն ներս աշխատած են յայտնի գիտնականներ եւ աստուածաբաններ՝ ինչպէս Յովհաննէս Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի:

Տաթևի Ճոպանուղի Հոկտեմբեր 2010-ին Աշխարհի երկարագոյն ճոպանուղին, 5.7 քմ երկարութեամբ, միացուց Տաթևի վանքը Հալիձոր գիւղին:

Ճոպանուղին կը շարժի ժամական 37 քմ արագութեամբ եւ 11 վայրկեանէն Հալիձորէն Տաթևի վանք կը հասնի:



Ճոպանուղին վար դիտուած



Ճոպանուղին

Պրն է եիշդ պաբասխանը
Մանկապարտէլի անկիւն



Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ:

Այս տարի Ծաղկապարտը Ապրիլ --ին է:

Ամբողջացուր ըստ Յովհաննէսի Աւետարանին 12.12-15

աւանակին, թագաւորդ, Սուրբ, էշ, թագաւորը, Ովսաննա՛, արմաւենիի, Յիսուս, Ջարկի, բաւմութիւն

Յագորդ օրը, ժողովուրդի մեծ ----- մը, որ ----- րօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ ----- Երուսաղէմ կու գայ, ----- եիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «-----, օրհնեալ ըլլայ ան՝ որ կու գայ Միւրոզ անունով, Իսրայէլի -----»:

Յիսուս -- մը գրնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ ----- գիրքերուն մէջ գրուած է.-

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Աիոնի՛ աղգիկ. ահա ----- Քեզի կու գայ իշու մը ----- վրայ նստած:

Պրն է Էիշդ պատասխանը
 Նախակրթարան Ա., Բ. և Գ. դասարաններու անկիւն

1.- Պրն Է Էիշդ այս տարի կը փոճենք Մարտ 21-ին:

- ա. Ա. Ղեւոնդեանց խաճաններուն
- բ. Ա. Աբգար թագաւորին
- գ. Ա. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Քառասուն Մանուկներուն

2.- Այս տարի Էրբ կը փոճենք Մնտեսի Կիրակին:

- ա. փետրուար 6
- բ. փետրուար 26
- գ. Մարտ 4
- դ. Մարտ 15

3.- Այս տարի Էրբ է Միգիւնիլը:

- ա. Մարտ 27
- բ. Մարտ 18
- գ. փետրուար 16
- դ. փետրուար 19

4.- Այս տարի Էրբ է Ծաղկաւարդը:

- ա. Ապրիլ 5
- բ. Մարտ 1
- գ. Ապրիլ 9
- դ. Մարտ 25

5.- Ա. Գրիգոր Մաթեւոսի ղր վանքին մէզ անցուց իր ժամանակին մեծագոյն բաժինը:

- ա. Սանահին
- բ. Քաղբար
- գ. Նարեկ
- դ. Մաթեւ

6.- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ 13 տարի ղր մնաց:

- ա. Խոր Վիրապ
- բ. Մաթեւի Վանք
- գ. Մորդապ թագաւորի պալատին մէզ
- դ. Սանահին

7.- Քայերէնով «Telepherique»-ին կ'ըսենք

Ծ-----:

8.- Մեծ Պահիի ընթացիին ինչ վիճակի մէզ կը մնայ Սուրբ Խորանին վարագոյրը:

- ա. Բայ
- բ. Գոյ

9.- Քերեւեալներէն ղր մէկը Յիսուսի պարմած առակներէն է:

- ա. Անառակին
- բ. Մնտեսին
- գ. Պատաւորին
- դ. Գալստեան

10.- Միգիւնիլ շաբաթուան ղր օրը կ'ըլլայ:

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Քինգշաբթի

Պրն է եիշդ պատասխանը

Նախակրթարան Պ., Ե. և Ջ. դասարաններու անկիւն

1.- Պրն ւ փոնը այս փարի կը փոնենք Մարտ 28-ին:

ա. Ա. Պետոնդեանց խահաններուն

բ. Ա. Գրիգոր Լուսաւորիչ մուրն ի վիրապ

գ. Ա. Գրիգոր Լուսաւորիչ ելն ի վիրապ
դ. Աուրբ Թէոդորոս Ջօրավարին

փարբեր խաղախներէն էին:

փոխը ----

7.- Քերելեալներէն ո՞վ Օջուն գիւղին մէջ ծնած էր:

ա. Գրիգոր Մաթեալի

բ. Ա. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ա. Յովհաննէս Պրոփնեցի

դ. Ա. Յովհաննէս Օջնեցի

2.- Ծաղկավարդին նախորդող Ծաբաթ օրը որու յիշարակը կը փոնենք:

ա. Պավարոսի Յարութեան

բ. Յիսուսի Յարութեան

գ. Յիսուսի Երուսաղէմ մուրփին

դ. Լերան խարոպին

8.- Քերելեալներէն ո՞վ վայոց Ձորի մարպին մէջ ծնած էր:

ա. Գրիգոր Մաթեալի

բ. Ա. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ա. Յովհաննէս Պրոփնեցի

դ. Ա. Յովհաննէս Օջնեցի

3.- Այս փարի Մարտ 14-ին ո՞ր սուրբերուն փոնը կը փոնենք:

ա. Ա. Գրիգոր Մաթեալի

բ. Ա. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ա. Յովհաննէս Պրոփնեցի

դ. Ա. Յովհաննէս Օջնեցի

9.- Երբ աշխարհի ամենէն երկար եոպանուղին (**téléphérique**) նսրիս ո՞ր վանքը կը հասնիս:

4.- Միգինքը ո՞ր երկու կիրակիներու մէջի Ջորեխաբթի օրուան կը հանդիպի:

ա. Անառակին եւ Մնրտեսին

բ. Մնրտեսին եւ Պարաւորին

գ. Պարաւորին եւ Գալսրտեան

դ. Մնրտեսին եւ Գալսրտեան

10.- Երբ ըսենք «մուրն ի վիրապ» կամ «ելն ի վիրապ», ո՞ր սուրբին մասին կը խօսինք:

Ա. Գ-----

5.- Քերելեալներէն որուն մասին կը կարդանք Պուկաս 18.1-8-ի մէջ:

ա. Պարաւորին

բ. Մնրտեսին

գ. Գալսրտեան

դ. Անառակին

6.- Քառասուն Մանուկները ո՞ր շրգանի

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ո՞ւր կը կարդանք. «Երբ ծով կը պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման...»:

- ա. Մատթէոս 6.16
- բ. Մարկոս 6.16
- գ. Ղուկաս 6.16
- դ. Յովհաննէս 6.16

2.- Ո՞վ ըսած է.«Մէկը կարող է կենդանիի միս չուտել, բայց անընդհատ իր եղբօր միսը ծամել»:

Ե-----

3.- Գրէ՛ Պահքի 7-ը Կիրակիները ճիշդ շարքով:

- ա. Բուն Բարեկենդան
- բ.
- գ.
- դ.
- ե.
- զ.
- է.

4.- Վարդանանցէն քանի՞ օրեր ետք Բուն Բարեկենդան է:

- ա. 3
- բ. 10
- գ. 7
- դ. 17

5.- Հետեւեալներէն ո՞ր մէկը Յիսուսի պատմած առակներուն մաս չի կազմեր:

- ա. Դատաւորին
- բ. Տնտեսին
- գ. Գալստեան

դ. Անառակին

6.- Սեբաստիոյ մէջ կառուցուած էր քառասուն Գմբեթանի տաճար մը: Այս տաճարը մինչեւ ե՞րբ կանգուն մնացած էր:

Լ-----բը

7.- Հետեւեալներէն ո՞վ հիմնած է Տաթևի համալսարանը:

- ա. Գրիգոր Տաթևացի
- բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի
- գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի
- դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

8.- Հետեւեալներէն ո՞վ Կաթողիկոս եղած է ու մշակած 37 եկեղեցական օրէնքներ 718-ի Դուինի մէջ կազմակերպուած եպիսկոպոսական ժողովին:

- ա. Գրիգոր Տաթևացի
- բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի
- գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի
- դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

9.- Պլուզ կը նշանակէ գաճաճ կամ կարճահասակ: Գրէ՛ Պլուզին լման անունը:

Յ----- Ե-----

10.- Ամբողջացո՛ւր. Ս. Յովհաննէս Որոտնեցին պայքար մղած է հայաստանեայց եկեղեցւոյ լ----- շարժումին դէմ:

Մեծ պահքը երրեակ իմաստով*

Մեծ պահքի քառասնօրեայ շրջանը եկեղեցւոյ հաւատացեալներուն համար հոգեկան վերանորոգութեան սքանչելի առիթ մըն է: Երբ անիկա գիտակցօրէն ապրուի հոգեկան ազնուացման, առհասարակ մարդ անհատի երջանկութեան ամենէն ազդու եւ բարերար միջոցը կը դառնայ: Մեծ պահքը գիտակցօրէն ապրիլ կը նշանակէ:-

1. Աղօթքը դարձնել մեր կեանքի կեդրոնական առանցքը

Առաջին հերթին, աղօթել առանձնապէս տունին կամ ուրիշ այլ հանդարտ միջավայրի մէջ, ուր ինքնամփոփումի, առանձին ըլլալու, ինք իր խղճին հետ խօսակից դառնալու կարելիութիւնը կայ: Կ'անդրադառնա՞նք թէ մարդ առօրեայ կեանքին մէջ որքան գրաւուած է ուրիշներով...: Բայց անհրաժեշտ է որ երբեմն ինք իր անձին հետ առանձին ըլլայ, եւ Աստուծոյ ամենատես աչքին ներքեւ, դիտէ ու քննէ ինքզինք...:

Խոկումի, ինքնանդրադարձումի, առանձնութեան, աղօթքի պահերուն, երբ ոչ ոք մեզի կը նայի, ուրիշ մէկու հետ կապ չունինք, երբ մեր աչքերը մեր անձերուն վրայ կը սեւեռենք, այն ատեն կը յաջողինք սրտբացօրէն, ճշմարտօրէն եւ ջինջ յստակութեամբ մենք զմեզ տեսնել, ճանչնալ եւ սրբագրել կամ վերանորոգել...:

2. Պահք բռնել

Աղօթելու հետ առնութիւն եւ բացի աղօթելէ անհրաժեշտ է պահք բռնել, ինչպէս ժողովրդական արտայայտութեամբ կ'ըսուի: Ի՞նչ կը նշանակէ պահք բռնել...:

Կրօնական ճշգրիտ եւ խորունկ իմաստով՝ պահքը այնպիսի արարք մըն է որ մարդը կ'առաջնորդէ ինքզինք կամաւորապէս զրկելու որոշ զգայարանական, նիւթական հաճոյքներէ եւ ճոխութիւններէ: Առիթ կու տայ անոր մտածելու հոգեկան, բարոյական կեանքի մշակման մասին...:

Յիսուսի կեանքի պատկերին մէջ մենք կը տեսնենք որ Ան քառասուն (40) օր անապատի մէջ առանձնացաւ, ինքզինք կերակուրներէ զրկեց, հոգեպէս զօրանալու համար: Աւետարանին մէջ մենք կը կարդանք թէ Ան պատուիրեց Իր հետեւորդներուն եւ ըսաւ որ պէտք է պահք բռնէք բայց ոչ «ի ցոյց մարդկանց», այլ ներքին ինքնամփոփումով, որպէսզի պահքը արժէք ստանայ եւ ծառայէ անձին վերանորոգութեան...:

3. Բարիք Գործել

Մեծ պահքը շրջանը գիտակցօրէն ապրիլ կամ գործնապէս իմաստաւորել կը նշանակէ ոչ միայն ներանձնական աղօթք ընել կամ պահք բռնել, այլ նաեւ որոշ գործեր կատարել, դրական արարքներ գործել, որոնց նպատակն ու արդիւնքը բարիք ըլլան, եւ ոչ թէ միայն անհատին, այլ իր նմանին, ուրիշին երջանկութեան ծառայեն:

Հետեւաբար, Մեծ Պահքը քառասնօրեայ շրջանը քրիստոնէաբար եւ հայօրէն ապրելու համար ունինք երեք գլխաւոր պարտաւորութիւններ.

- 1.- Աղօթել՝ առանձնապէս եւ հաւաքաբար
- 2.- Պահք բռնել ինքնագրկումի սկզբունքով
- 3.- Բարիք գործել՝ ծառայութիւններ մատուցանելով:

***հատուածներ՝ «Պարզ խօսքեր՝ պարզ հոգիներու համար» Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոս**